ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար դյուրակիր համակարգիչների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 28.10.2025թ. N 373/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստը տեղի ունեցավ 25.11.2025թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Նազարյանը, Զ.Աղաջանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

-Գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Գալստյանը տեղեկացրեց, որ սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը՝ 17. 11. 2025թ. գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցին է ներկայացրել պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն ընտրված մասնակից ճանաչված «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչպես նաև իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծը:

-Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի 1-ին և 2-րդ չափաբաժինները համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:

-«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնել նախատեսված ընթացակարգ՝ «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյան

Անդամներ՝ Ա.Նազարյան

Զ.Աղաջանյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան